

ՍԻՄԵՈՆ Ա ԵՐԵՎԱՆՑԻ

ԱՂՈԹՔ ԵՎ ՀԱՌԱՋԱՆՔ ԱՌ ԱՍՏԾՈ ԵՐԶԱՆԻԿ ՍՈՒՐԲԵՐԸ ԵՎ ԱՌ ՀԱՅՈՑ ԱԶԳԻՍ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆԵՐՆ ՈՒ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Այսքան հառաջանքներից ու աղաղակներից, աղոթքներից ու պաղատանքներից հետո, որոնք իմ Ամենագլուխ ու Ողորմած Աստծուն մատուցեցի իմ մեղուցյալ անձի և իմ խոնակի ազգի համար, այժմ մեծական ողբով ու լալազին աչքերով ձեզ եմ դիմում և ձեր սիրո ու գթության դրմերն եմ բախում, ո՞վ Աստծո երջանիկ սուրբեր և մեր առանձնահատուկ բարեկամներ:

Ո՞վ Քրիստոսի սիրելիներ և մեր ճշմարիտ բարեկամներ,

Ո՞վ Աստծո համելի ծառաներ ու մեր սրտացավ տերեր,

Ո՞վ Քրիստոսի համարձակ ու հավատարիմ խորհրդակիցներ և մեր բազմերախս հայեր ու գթառատ ծնողներ,

Ո՞վ մեր ազգի լուսավորիչներ ու դաստիարակներ, նախածանոթներ, հարազատներ: Ձեզ է ուղղված իմ (այս) հառաջանքը. ո՞վ Քրիստոսի սրբազն առաքյալներ՝ Սուրբք Թագեռու և Բարդողիմետոս, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, սուրբեր և սրբածին որդիներ, թոռներ ու մեր Սուրբ Լուսավորչի շառավիդներ՝ Սրբատակես, Վրթանես, Հուսկի, Գրիգորիս և Դամիել, Սուրբ Ներսես, Սահակ, Մեսրոպ և Հակոբ Հայրապետներ: Քրիստոսի սուրբ և անարատ հարսներ Հոփիսիմյանք ու Գայանյանք: Մեր սուրբ թագավորներ Աքագար ու Տրդատ: Սուրբ Ուկյանք, Սուրբիապանք և Վարդանանք, որ մեր երկրից ու ազգից եք, և որ մեր երկրում համատակվեցիք: Քանզի դուք, ինչպես Մովսեսն ու Հետուն, մեզ անմարմին փարավոնից և Արա եզիական գործերից ազատեցիք:

Դո՞ւք մեզ մոտ բերեցիք աստվածային Կտակարանների ի վերուստ [շնորհված] պատգամները:

Դո՞ւք մեզ լուսավորեցիք հավատքով ու աստվածապաշտությամբ:

Դո՞ւք մեզ Աստվածածանոթ դարձրիք և մեր բերաններն Աստծուն աղոթելու համար բացեցիք:

Դո՞ւք կրեցիք, մեր ազգի փրկության համար, այն անասելի չարչարանքները և նեղեցիք ձեր սուրբ և պատվական արյունը, այլև՝ [որպես] արժանի պատարագ Աստծուն ընծալվեցիք և Նրան մեզ հետ հաշտեցրիք:

Դո՞ւք մերկեցիք ձեր վարդագույն արյամք մեր երկրի հողերն ու քարերը և դրանք տվեցիք մեզ ի բժշկություն մեր հոգիների ու մարմինների:

Ո՞վ Աստծո սուրբեր. մեր (այս) երկրում են ամփոփված ձեր սուրբ, հրաշագործ ու կենադանի աշխարհներն ու մարմինները, որոնց վրա էլ ձեր անվամբ հրաշալի ու Աստվածազարդ տաճարներ ու եկեղեցիներ կանգնեցվեցին: Դրանցից ենում էին ու ենում են տեսակ-տեսակ շնորհներ ու զորություններ: Հավատքով դրանց դիմողները ստանում էին ու ստանում են պես-պես բժշկություններ ու հոգլոր և մարմնավոր պարզներ, որոնք էլ իրեն յուրահատուկ պարծանք և ապավիմության վայր Աստված տվեց հայոց ազգին:

Արդ, ո՞վ բազմերախտ մեր հայրեր և մեր հոգիների ու մարմինների լուսավորիչները արթացեցք և տեսեք (մեր) վանքերի ու եկեղեցների խոճալիությունը, որոնք ձեր անվամբ են կառուցված: Նայեցե՛ք հրանց տառապանքներին, որոնք կրում են զանազան թշնամիներից, որոնցից շատերն էլ, մեծամասամբ, ամայի են ու անշքացած: Դրանց մեջ եղած ձեր բազմահրաշ դամբարանները՝ անպատված ու անարգված, իսկ մեր ազգը, տիրոջից զրկված և ամեննից ու ամեն կողմից անօգնական, մատնված է խատախրտ տերերի ձեռքը:

Արդ, ո՞ւմ պիտի դիմենք, ո՞ւմ պիտի պատմենք մեր (այս) վիշտն ու տառապանքները, և կամ մեզ համար ո՞ւմ միջնորդ և բարեխսու դարձնենք առ Աստված, եթեն ոչ մեր առանձնահատուկ բարեկամներիդ ու ծանոթներիդ, Աստծո սիրեկիմերիդ ու հաճելի ծառաներիդ: Քանի որ երբ Աստված բարկանում էր Հին [Ուխտի] ժողովրդի վրա, նրանք Աքրահամին, Մովսեսին, Դավթին և իրենց մյուս նախնիներին էին հիշում և առ Աստված միջնորդ դարձնում, ինչպես հայտնի է երեք մանուկներով և շատ ուրիշ (օրինակներով): Եվ Աստված էլ, նրանց նախնիների սիրո և միջնորդության համար մեղմում էր բարկությունը և մերում էր ժողովրդին: Ինչպես և Դավթին է վկայում, թե Աստված ասաց՝ «**Արանց կոտորել**» (Բմմտ. Ելք ԼԲ 10), (սակայն) եթեն ընտրյալ Մովսեսը Նրա առջև չլիներ, որովհետև՝ Տիրոջը դիմենց և Նրա բարկությունը կանխաց՝ ասելով. «Եթեն Քո ժողովրդի մեղքերը թողնում ես, թո՞յ, իսկ եթեն ո՞չ՝ ի՞նձ էլ քննիր Քո [Կյամքի] Գործից» (Բմմտ. Ելք ԼԲ 31-32): Եվ Աստված իմբը էլ բազմիցս ասել է (Իր) ժողովրդին. «**Իմ սիրելի Աքրահամի և իմ ծառանձնը Մովսեսի ու Դավթի պատճառով է, որ ձեզ ողորմում եմ:**

Արդ, ո՞վ Աստծո սուրբեր, մեր (այս) ազգի Աքրահամը, Մովսեսն ու Դավթին էլ դուք եք, որովհետև Աստված ձեզ այս փոքր հոտի իշխան, առաջնորդ, վերակացու և հովիկ կարգեց: Ուստի և դուք եք պարտավոր մեր մասին հոգալ, միջնորդել և առ Աստված մեզ համար աղոթել, ինչպես նրանք էին անում իրենց ժողովրդի համար:

Քանզի, ո՞վ երանելիներ, որ մեզ համար այս կյանքում այնքան տքնեցիք քարոզելով, պահը պահելով, աղոթելով, զանազան նեղություններ ու տարատեսակ չարչարանքներ կրելով, մինչև իսկ մեր արյունն էլ մեզ համար հեղեցիք, այժմ, որ (այս) աշխարհի տառապանքներից ձերբազատված՝ փառավորված Երկնքում եք զտնվում, և [քանի որ] Աստծո մոտ համարձակություն ունեք, Է՛լ առավել պարտավոր եք մեր մասին հոգալ ու օգնել և միջնորդ ու բարեխսու լինել Աստծո մոտ և Նրա սերն ու քաղցրությունը մեր հանելաց շարժել:

Արդ, իմ թախիցայ անձն զցում եմ ձեր ոտքերի տակ, անարժան բերանովս համբուրում եմ ձեր սուրբ ու շնորհատու Աշխարհները, լիզում եմ ձեր դամբարանների հրաշագործ ու խնդրակատար հողը և արտասվաթոր աչքերով հայցում եմ ձեզամից, ո՞վ Քոյստոսի սիրելիներ՝ մեր առանձնահատուկ ծանոթներ ու բարեկամներ:

Ո՞վ բազմերախտ մեր հայրեր ու գթառատ ծնողներ. աղաչում եմ ձեզ, նայեցեք մեր խնդրության ու տառապանքներին և մեր վանքերին ու եկեղեցներին. մեզ ողորմություն արեք ու օգնեցեք:

Ո՞վ Աստծո սիրելիներ, եթեն մեզ մեր մեղքերի համար չեք խնայում, ապա գոնե ձեր պատվական Աշխարհներն ու դամբարանները խնայեցեք, որոնք ծաղրվում ու ուտնակոյն են լինում թշնամիների ու անսուրբների կողմից:

Ով մեր բազմերախտ հայրեր, եթե մեր անօրենությունների պատճառով մեզ լրել եք, ապա գոմն հիշեցեք մեզ համար կրած ձեր կակծալի ու սարսողի չարչարանքները, և մեզ համար հեղած ձեր պատվական արյունը. խորհեցեք և մեզ ողորմություն արեք:

Եվ մանավանդ դու, ո՞վ հայր մեր բազմաշնորհ, ծնող մեր գթառատ և մեր հոգիների ու մարդիմնների Լուսավորիչ Սուլրդ Գրիգոր. հիշի՞ն քո եղիկամյա անտանելի ու անօրինակ չարչարանքները, տասներեքամյա անըմրունելի տառապանքները, որ (կրեցիր) Վիրապում թունավոր (զեռունների) մեջ, անհանգիստ տքնություններդ և քո կյանքում մեր փրկության համար անդադար հսկումներդ:

Քեզ հետ [թող հիշեն] նաև սրբազն առաջլամերն ու մեր լուսավորիչները, որոնց էլ դու շառավիղեցիր. Քրիստոսի սուրբ և անարատ օրիորդները, որ քեզ հետ մարտակիցներ ու պատվակիցներ եղան, մեզ (համար)՝ ավետարերներ ու լուսարերներ: [Թող հիշեն նաև] քո սուրբ և բարեքողոջ որդիներն ու թոռները, որոնք աստվածառունկ որդիի ընձյուղելով՝ քո բանավոր այգին մշակեցին և Սուրբ Հոգու կենդանարար ջրով ոռոգեցին: [Թող հիշեն նաև] մեր սուրբ թագավորներն ու զորավարները, որոնք քեզ հետևելով՝ սպառազինվեցին քո քարոզած հավատքով ընդում հոգևոր ու մարմնավոր թշնամիների, և քո ժողովորի համար մարտնչեցին ու համատակվեցին:

Դուք, որ ամենքդ միասնական եք, մոտեցե՛ք Աստծուն, մշտանվեր ու անդառնալի ձեր աղոթքներով միջնորդ ու բարեխսու եղեք Նրա մոտ և խնդրեցե՛ք, որպեսզի մեզ ողորմի ու այցելություն ամի, վերանորոգի մեր ազգի ու եկեղեցիների հնությունը, ժողովի ցաք ու ցիր եղած իր (այս) հոտը իր խնամատար գոզի և մեր սուրբ եկեղեցիների գրկի մեջ: [Խնդրեցե՛ք Տիրոջը, որպեսզի] ինքը մեզ հովվի և հոգեկան ու մարմնական բոլոր թշնամիներից պահպանի ու իր ամենազոր զորությամբ վերակացու լինի:

Եվ մանավանդ իմձ՝ ձեր առանձնահատուկ (այս անուն) ծառայիս օգնական եղեք և փրկեցեք բոլոր փորձություններից և հատկապես՝ Աերկաներից: Եվ Աստծուց խնդրեցեք, որպեսզի իմ բազմատեսակ մեղքերին թողություն շնորհի և իմձ, ըստ իր կամքի հաճության, պահպանի (այնքան), որքան որ աշխարհում նմ: Իսկ այստեղից հետո, ձեր միջնորդությամբ, իր օրինյալ տեսությանն արժանացնի, որպեսզի ես էլ ձեզ հետ փառավորեմ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն հավիտյան հավիտենից. ամեն:

ԱԾԽԱՐՀԱԲԱՐԻ ՎԵՐԱԾԵՑ
ԱԹՈՒԻՐ ՄՐԿ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ